

Ա. Ն. ԲՈՒՆԻՍԹԱՆ

ԽԱՂՈՂԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ ԼԵՆԻՆԱԿԱՆԻ
 ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Սաղոդը Հայաստանի լեռնային շրջաններում տարածելու նպատակով, սկսած 1949 թվականից, Այգե-գինեգործական ինստիտուտի սելեկցիայի սեկտորի վարիչ Ս. Հ. Պողոսյանի ղեկավարությամբ ձեռնարկեցինք խաղողի վաղի մշակութային փորձնական աշխատանքները Լենինականի սարահարթում: Այդ նպատակով հիմնադրվեց 2 հեկտար խաղողի փորձնական այգի: Որպես կլանյութ օգտագործվել են ինչպես Այգե-գործական ինստիտուտի սելեկցիայի սեկտորի կողմից ստացված սերմնաբույսերն ու սորտերը, այնպես էլ ներմուծված մի շարք այլ սորտեր: Ընդամենը տնկվել են 236 անուն՝ մոտ 4000 բույս: Նշված կլանյութի հիմնական մասը տնկվել է Գիտությունների ակադեմիայի Բուսաբանական այգու Լենինականի բաժանմունքի տերիտորիայում: Այդտեղ մեր կատարած ուսումնասիրությունների նախնական արդյունքները տրվում են ստորև:

Լենինականի սարահարթում ղերակշռում է շաղանակազույն, հումուսով համեմատաբար աղքատ, կրային մասով հարուստ հողերը: Առանձին մասերվների վերնաշերտը սեահող է, 5—10 սմ հաստությամբ, որին հաջորդում են զանազան նստվածքներ, ավազախոտն հողեր: Շիրակի լեռնաշղթայի հարավային լանջերը հարուստ են կրաքարով և շիֆերների նստվածքներով: Ախուրյան գետի ձորը հարուստ է գիատոմիտի նստվածքներով, որը հողի շերտերում զգալի մասն է կազմում:

Կլիման այստեղ խիստ է, ձմռան սառնամանիքները երբեմն հասնում են մինչև 37—39 աստիճանի: Գարունը սկսվում է համեմատաբար ուշ, և վաղ գարնան ցրտերը հիմնականում ապրիլ ամսին հասնում են—5,7—7,7°Ց, դեռ մայիսին էլ —1,9—4,5°Ց, հաղվադեպ՝ ջերմաստիճանի անկումը 0-ից ցածր տեղի է ունենում նաև հունիսի առաջին տասնօրյակում: Ամռան տաք և չոր օրերը տևում են հունիսի երկրորդ կեսից մինչև սեպտեմբերի 15—20:

Աշնան առաջին ցրտահարությունը ($-2,5-7,9^{\circ}\text{Ց}$) տեղի է ունենում հիմնականում հոկտեմբերի սկզբին, առանձին տարիներում՝ սեպտեմբերի երկրորդ կեսում:

Յոթ տարվա տվյալների համաձայն տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է $6,3^{\circ}\text{Ց}$, իսկ օգտակար ջերմաստիճանի քանակը վեգետացիայի ընթացքում՝ 2479°Ց :

Լենինականի սարահարթի կլիմայական պայմանները խաղողի վաղի մշակութային համար ավելի նպաստավոր են, քան մի քանի հյուսիսային շրջաններում, ինչպես օրինակ, Մոսկովայի մարզը, որտեղ օգտակար ջերմաստիճանը կազմում է $2100-2300^{\circ}\text{Ց}$, Հյուսիսային Լատվիան՝ 2100°Ց , Բելոռուսիան՝ $2300-2400^{\circ}\text{Ց}$:

Եթե այդ շրջաններում, որտեղ ձմեռը ավելի խիստ է, սրղեն արմատավորվում է խաղողի մշակությունը, ապա Լենինականի սարահարթի կլիմայական պայմաններում դա առավել ևս հնարավոր է:

Յոթ տարվա ընթացքում մեր կատարած ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Լենինականի պայմաններում փորձարկվող բոլոր սորտերը և սերմնարույսերը, անկախ նրանց ծագումից, բաց վիճակում ձմեռելու դեպքում ցրտահարվում են: Անվնաս է մնում միայն ձյան ծածկույթի տակ եղած վերերկրյա մասը՝ շվերը $10-15$ սմ երկարությամբ:

Հողի ցածր ջերմաստիճանը ձմեռվա ընթացքում մինչև այժմ բացասաբար չի ազդել փորձարկվող բույսերի արմատական սխտեմի վրա:

Վաղ դարնանային ցրտերը առանձնակի վնաս չեն հասցնում վաղին, քանի որ ապրիլ ամսին վաղերը դեռ ծածկված են լինում, իսկ բացված լինելու դեպքում, դեռ նրանց վեգետացիան սկսված չի լինում: Մայիս ամսում տեղի ունեցող առանձին ցրտահարություններից վնասվում են բացված աչքերի զգալի մասը, սակայն ինչպես ցույց տվեց փորձը, շատ սորտերի և սերմնարույսերի մոտ փոխարինող աչքերից առաջացած երկրորդ բերքը մինչև սեպտեմբերի վերջը հասունանում է: Այդ հատուկ է Սեյանեց Մալենգրա, Վիշնյովի, Չյոռնի Սլադկի և մի շարք այլ սորտերին, Սպիտակ Սաթենու № 59, Կողբենու և այլ սերմնարույսերին: Ավելի վտանգավոր են ուշ դարնանային — հունիս ամսում — պատահող ցրտահարությունները. այդ դեպքում առաջացած 2-րդ բերքը չի հասունանում: Սակայն այդ տեղի է ունենում հազվագեղ: 24 տարվա ընթացքում Լենինա-

կանի պայմաններում ցրտահարությունները հունիս ամսում կրկնվել են 2 անգամ:

Պետք է նշել, որ սարականջերում ուշ դարնանային ցրտահարություններ տեղի չեն ունենում: Դա կարևոր նշանակություն ունի հետագայում խաղողի մշակությունը Լենինականի սարահարթի պայմաններում տարածելու հարցում, քանի որ Շիրակի լեռնաշղթայի հարավ և հարավ-արևմտյան սարավանջում մեծ հողային մասսիվներ կան, որտեղ հնարավոր կլինի խաղող մշակել:

Լենինականի կլիմայական պայմաններում փորձարկվող խաղողի տարբեր սորտերը և սերմնաբույսերը, նայած նրանց ծաղմանը, ունեն տարբեր վարքագիծ ըստ վեգետացիայի շրջանի տեղություն, բերքի որակի, ցրտադիմացկունության և այլ հատկությունների:

Արարատյան դաշտավայրում տարածված ուշահաս սորտերը— Ոսկեհատը, Արարատին, Գոռան դմակը, Մսխալին, Կախեթը, Մափերավին, Դեղին և Վարդագույն Երևանիները— Լենինականի պայմաններում չնայած նորմալ աճում և պտղաբերում են, սակայն պտղի որակով պիտանի չեն օգտագործման համար: Նրանց պտուղների շաքարայնությունը սեպտեմբերի վերջին կազմում է $10-20\%$, նայած սորտին, իսկ թթվությունը՝ 14% :

Լենինականի սարահարթի համար արժեքավոր են այն սորտերը և սերմնաբույսերը, որոնք տվյալ պայմաններում կարողանում են ալարաել իրենց վեգետացիան և տալիս են որակով բերք:

Չնայած փորձարկվող բույսերի չնչին մասն է բերքի եկել, բայց նրանց մեջ որոշ սերմնաբույսեր և սորտեր իրենց վաղահասությունից և բերքի որակով արժանի են ուշագրություն: № 1 աղյուսակում բերվում են մեր գիտողությունների արդյունքները բերքի եկած սորտերի և սերմնաբույսերի վերաբերյալ:

Աղյուսակի տվյալները վկայում են այն մասին, որ Լենինականի պայմաններում միանգամայն հնարավոր է խաղողի վաղի մշակությունը, և որ փորձարկվող մատերիալի մեջ կան սորտեր և առանձին սերմնաբույսեր, որոնք արժեքավոր են հետագա բազմացման և լայն փորձարկման համար:

Նախնական տվյալների համաձայն աղավթի սորտերից են Սեյանեց Մալեգրան, Մեդովյան, Չյոռնի Սլադկին, տեղական-

Քաղաղի տարբեր սղտերի և սերմնաբույսերի տարբերակները Հենիականի պայմաններում

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
Աղբյուրի կամ սերմնաբույսի անունը	Արտեզից և ստացված	Տարի	Հիմնական ընդհանուր	Հիմնական	Հիմնական	Հիմնական	Հիմնական	Հիմնական	Հիմնական	Հիմնական
Հյուսիսային ծաղում ունեցող սորսեր										
Սեյառնեց Մալեպրա										
Չյունի Սաղիկ	ՀՍՄԽ ԳԱ Այգի-գինեպր-ծաղում կոնսերվացիայի սեկտոր	1948	1950	7/5	24/6	4/8	22,0	94,0	67,0	12
Եվրոպական X Ամուրական	»	1948	1950	13/5	21/6	5/8	21,0	56,0	62,0	10
Եվրոպական	»	1950	1953	3/5	13/6	6/9	18,0	200,0	73,0	12
Նովոգրեկական	»	1950	1953	10-13/5	25/6-7/7	21/8	13,4	107,0	63,0	15
Սեպուկա	»	1950	1953	7/5	18/6	10/8	15,0	57,0	66,0	12
Վերնյովկ	»	1950	1952	9-12/5	22-27/6	18-20/8	16,0	151,0	62,0	16
Չյունի Սաղիկ X Ամուրական	»	1950	1952	7/5	12/6	27/7	23,0	96,0	66,0	13
Պլյուսկոն	»	1950	1952	6-7/5	15/6	4-6/9	-	103,0	69,0	14
Պլյուսկոն	»	1949	1953	9/5	19/6	3/9	19,0	91,0	49,0	9
Պլյուսկոն	Մեյոսկոն	1949	1951	5/5	14/6	10/8	-	-	-	-
Հարավային սորսեր										
Վաղնի	Այգի-գինեպր-ծաղում կոնսերվացիայի սեկտոր	1950	1953	7/5	27/6	5/8	19,0	104	47,0	9,0
Հարավային	»	1950	1951	5-7/5	24-27/6	30/8	13,5	164	60,0	14,0
Շաֆերի Օրդուրալի	»	1950	1954	6-8/5	2-6/7	25/8	16,2	149	52,0	12

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
Արժեքներ	Արժեքներ, բնաբույս	1951	1953	10/5	25/6	21/8	17,0	92,0	64,0	13
Ռեզերվներ	»	1950	1954	14/5	2/7	30/8	—	110,0	80,0	10
Մաքերակներ	»	1950	1954	11/4	24/6	2/9	17,0	146,0	56,0	11
Բաժնեկներ	»	1950	1952	4/5	15/6	3/9	16,0	110,0	56,0	11
Գույքային ակտներ	»	1949	1953	8/5	29/6	—	—	109,0	52,0	9
Կոդերներ	»	1949	1953	—	4/7	19/8	19,0	92,0	52,0	—
Հաշիվներ	»	1950	1953	10/5	24/6	27/8	16,0	151,0	49,0	9
Տոկոսներ	»	1951	—	12/5	24/6	29/8	18,0	181,0	35,0	7
Արժեքային										
№ 842 Ս. Մաքերակներ	»	1950	1952	6/5	15/6	29/7	23,0	137,0	51,0	13
Արժեքներ	»	1950	1953	13/5	19/6	4/8	23,0	113,0	72,0	22
№ 845/10 Ս. Մաքերակներ	»	1953	1954	7/5	27/6	8/8	22,5	115,0	56,2	13
№ 70 ակտներ	»	1953	1954	7/5	27/6	15/8	18,5	74,0	52,0	11
№ 65/2 — Ս. Մաքերակներ (ազատ փոխանակում)	»	1951	1953	12/5	24/6	29/8	18,0	181,0	35,0	7
№ 65/18 — Ս. Մաքերակներ (ազատ փոխանակում)	»	1953	1954	10/5	28/6	12/8	22,0	93,0	54,0	10
№ 23 Գառան ցմակներ	»	1953	1954	13/5	1/7	20/8	—	109,0	52,0	12
№ 822/11 Արժեքներ	»	1949	1953	—	—	—	21,6	131,0	69,0	15
Արժեքներ	»	1950	1954	10/5	30/6	11/8	20,0	120,0	51,0	12
№ 743/3 Ս. Մաքերակներ	»	1953	1954	10/5	30/6	11/8	20,0	120,0	51,0	12
26/1/4/4	»	1953	1954	10/5	30/6	11/8	20,0	120,0	51,0	12
№ 733 Արժեքներ	»	1953	1954	10/5	30/6	11/8	20,0	120,0	51,0	12
№ 992 Բանանի	»	1953	1954	10/5	30/6	11/8	20,0	120,0	51,0	12

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
№ 27 Ինսպեկտորական Ստանդարտ	Արդեգի ներդրածական խնամարտ	1949	1953	13/5	29/6	15/8	20,0	107,0	57,0	11
1-1 Ս. Մանգրա (սերժանտայն)	Լենինականում	1949	1953	10/5	24/6	13/8	20,0	90,0	57,0	11
1-2	պատրաստած սերժանտի ցանկից	1949	1954	10/5	—	1/8	23,0	120,0	54,0	13
1-3	»	1949	1954	12/5	1/7	12/8	21,0	110,0	61,0	12
1-4	»	1949	1954	10/5	20/6	20/8	15,0	134,0	66,0	17

ներից՝ Վաղենին, Սպիտակ Սաթենին, սերմնաբույսերից՝ № 845/10-ը, L-1-ը, L-2-ը:

Ստորև բերվում է այդ սորտերի և սերմնաբույսերի համառոտ նկարագրությունը:

Մեղովիա: Փարթամ աճեցողությամբ և բերքատվությամբ աչքի է ընկնում փորձարկվող բոլոր սորտերի մեջ: Ծաղիկը երկսեռ է: Ողկույղը միջակ մեծությամբ: Պտուղը ձվաձև, կանաչա-դեղնավուն, բարակ մաշկով, հյութալի: Լավ է դիմանում Լենինականի ձմռանը և դարնան ու աշնան ցրտահարություններին: Վեգետացիոն շրջանը բողբոջման սկզբից մինչև պտղի հասունանալը տևում է 109—130 օր, 1960—2275³ օգտակար ջերմաստիճանի առկայությամբ: Գարնանային ցրտահարությունների դեպքում փոխարինող աչքերից նոր բերքատու չլեր է տալիս և բերքը լավ հասցնում է մինչև սեպտեմբերի 18-ը: Բերքատվությունը բարձր է, յուրաքանչյուր վազը տալիս է մինչև 7 կիլոգրամ բերք:

Սեյանեց Մալենգրա: Հյուսիսային շրջաններում տարածված վաղահաս սորտ է: Ծաղիկը ֆունկցիոնալ իդական է: Վեգետացիայի շրջանը Լենինականի պայմաններում տևում է 108 օր: Պտուղը կլոր է, դեղնա-կանաչավուն գույնի, մաշկը բարակ, պտղամիսը հյութալի, դուրեկան համով: Բերքատվությունը միջակից բարձր է, յուրաքանչյուր վազից հավաքել ենք 3—4 կիլոգրամ խաղող, մինչև 23⁰/₁₀₀ քաղցրությամբ: Տեղի պայմաններին լավ է հարմարվում:

Վաղենի: Արարատյան դաշտավայրի հինավուրց վաղահաս սորտերից է: Լենինականում ունի միջակ աճեցողություն, և վաղահաս է: Հասունացման սկիզբը 1953 թվականին դիտվել է օգոստոսի 16-ին, 1954 թվականին օգոստոսի 9-ին, 1955 թվականին՝ օգոստոսի 5-ին: Պտղի քաղցրությունը սեպտեմբերի 8-ին կազմում է 19⁰/₁₀₀, համը շատ դուրեկան է: Միլիոնյով համեմատաբար քիչ է վարակվում:

Սպիտակ Սաթենի: Հայաստանի հինավուրց վաղահաս սորտերից է: Լենինականում աճը միջակից բարձր է, բերքատվությունը միջակ՝ 2—3 կիլոգրամ յուրաքանչյուր վազից: Միլիոնյով համեմատաբար քիչ է վարակվում: Ծաղիկը երկսեռ է: Որպես սեղանի խաղող արժանի է բաղմացման Շիրակի սարահարթում:

Սերմնաբույս № 845/10: Ստացված է Այգե-գինեգործական ինստիտուտի սելեկցիայի սեկտորի ավագ գիտ. աշխատող Ս. Ս. Խաչատրյանի կողմից, Սեյանեց Մալենգրա և «Գառան դմակ»

Ռիշտեր» հիբրիդային կլոնի տրամախաչման միջոցով: Փորձարկվող բոլոր սորտերի և սերմնաբույսերի համեմատությամբ աչքի է ընկնում իր բարձր որակական հատկանիշներով և վաղահասությամբ: Բողբոջման սկզբից մինչև պտղի հասունացումը տևում է 108—110 օր: Ծաղիկը երկսեռ է, հաջող ինքնափոշոտվում է, տալով հավասարված, առանց մանրատրոսթյան լիարժեք օղկույզներ՝ միջակ մեծությամբ, 120—150 գրամ կշռով, բավարար խտությամբ: Պտուղը սև է. միջակ մեծությամբ (15+14,5 մմ), կլոր, պտղամիսը հյութալի, դուրեկան համով: Պտուղների քաղցրությունը հասնում է մինչև 23⁰/₁₀, թթվությունը՝ 7,3⁰/₁₀₀:

Անցյալ վեց տարիների ընթացքում լավ է դիմացել Լենինականի սառնամանիքներին, գարնան ու աշնան ցրտահարություներին: Մինչև այժմ Լենինականում փորձարկվող բոլոր երկսեռ սորտերից և կլոններից այս սերմնաբույսը իր որակով ու վաղահասությամբ ամենից արժեքավորն է, ուստի սրա բաղմացման գործը պետք է արագացվի: 1955 թվականին աճեցրած է 40 արմատակալ, իսկ 1956 թվականին բոլոր կտրոնները պետք է օգտագործել, որպեսզի 1957 թվականին այս սերմնաբույսից ունենանք առնվազն 100 վազ:

Լենինական-1, Աճեցրած է մեր կողմից Ս. Մալենգրա սորտի սերմերի ցանքից՝ Լենինականի պայմաններում: Արտաքին տեսքով վաղը նմանվում է Ս. Մալենգրային, բայց ավելի կենսունակ ու դիմացկուն է և ունի ավելի խոշոր պտուղներ:

Ծաղիկը ֆունկցիոնալ իգական է. Ս. Մալենգրայի համեմատությամբ ավելի հաջող է փոշոտվում: Ողկույզները ավելի լիքը են, 100—120 գրամ քաշով: Պտուղը սպիտակ-դեղնավուն, մաշկը բարակ, պտղամիսը հյութալի, դուրեկան համով: Սեպտեմբերի 8-ին քաղցրությունը հասնում է 20⁰/₁₀-ի: Վեգետացիոն շրջանը, բողբոջման սկզբից մինչև բնական տերեւաթափը, կարճ է, համեմատաբար ցրտադիմացկուն է:

Լենինական-2, Աճեցրած է մեր կողմից Ս. Մալենգրա սորտի սերմերի ցանքից՝ Լենինականի պայմաններում: Տերեւների կաղմությունը և թփի արտաքին ձևով տարբերվում է Ս. Մալենգրայից:

Ծաղիկը ֆունկցիոնալ իգական է: Ողկույզները 50—100 գրամ քաշով: Պտուղը կլոր, միջակ մեծությամբ, սպիտակ գույնի, մաշկը բարակ, պտղամիսը հյութալի, դուրեկան համով: Վեգետացիոն շրջանը համեմատաբար կարճ է և Սեյանեց Մա-

լինդրայից 10 օր շուտ է հասունանում: Պաղի քաղցրությունը սեպտեմբերի 2-ին կազմում է 23⁰/₁₀, իսկ Ս. Մալինդրայինը նույն ժամանակ՝ 18⁰/₁₀: Վաղի միջին աճեցողությամբ, միլիյուով համեմատաբար քիչ է հիվանդանում, անբնաթափ է լինում հոկտեմբերի սկզբին: Որպես գերմադահաս՝ մեծ հեռանկար ունի տարածվելու Լենինականի պայմաններում:

Բացի վերահիշյալ սորտերից և սերմնարույսերից, բավարարցուցանիշներ ունեն նաև Չյոսնի Սլադկի, Նովոչերկասկի, Վիշնյովի և Պլոդսրոգնայա սորտերը և Ալեք-գինեդործական ինստիտուտում ստացված վաղահաս սերմնարույսերը. Սեյանեց Մալինդրա № 65/2 և 65/18: Մոլոտակ Սաթենիի № 5/9 և Ամբարի X X Միչուրինի № 135 — հիրքիզային № 822/11 սերմնարույսերը:

Այսպիսով, խաղողի զանազան սորտերի և սերմնարույսերի փորձարկման նախնական արդյունքները վկայում են այն մասին, որ Լենինականի սարահարթի կլիմայական պայմաններում միանգամայն հնարավոր է խաղողի մշակութիւնն արմատավորումը: Եղած սորտերի փորձարկման միջոցով հնարավոր է ընտրել տեղի պայմաններին հարմարները և երիտասարդ սերմնարույսերի տեղում տրամախաշման ու զատարարակման միջոցով առաջացնել նոր, արժեքավոր վաղահաս սորտեր՝ Լենինականի սարահարթում խաղողի մշակութիւնը արմատավորելու նպատակով:

А. Н. Буннятин

Выращивание виноградной лозы в условиях Ленинакана

Резюме

С целью изучения возможностей возделывания виноградной лозы в суровых климатических условиях Ленинанканского плато нами с 1949 года, под руководством зав. сектором селекции Института виноградарства и виноделия С. А. Погосяна, начаты опытные работы. За это время заложено в Ленинанкане два гектара виноградника. Исходным материалом послужили полученные из сектора селекции указанного Института сеянцы местных и привозных сортов, гибриды местных и северных морозостойких сортов, саженцы ранних, среднеспелых и морозо-

стойких сортов, а также саженцы некоторых инорайонных сортов, полученных из Института «Магарах», Центральной генетической лаборатории им. И. В. Мичурина и выращенные нами сеянцы некоторых северных сортов.

Всего было посажено около 4000 растений, 236-ти сортов и гибридных комбинаций.

Основная часть материала выращивалась на территории Ленинанканского отделения Ботанического сада АН Армянской ССР, где и проводились наши изучения.

Климатические условия Ленинанканского плато характеризуются суровыми зимами, с морозами, достигающими иногда до $-37-39^{\circ}\text{C}$, поздним наступлением весны и коротким летом. Средне-годовая температура составляет $6,3^{\circ}\text{C}$, сумма полезной температуры за вегетацию — 2479°C .

Степень морозостойкости, вегетационный период, урожайность и качество урожая, выращиваемых в этих условиях подопытных растений, сильно различалась в зависимости от их происхождения.

Ценными являлись те сорта и сеянцы, которые в этих условиях успевали завершать свою вегетацию, обеспечивая и качество урожая. Такими в наших экспериментах являются: из привозных сортов — Сеянец Маленгра, Черный сладкий, Медовка, из местных — Спитак Сатени, из сеянцев гибрид № 845/10 (Сеянец Маленгра $\times F_1$ Гаран дмак $\times$ Риштер), сеянцы сорта Сеянец Маленгра № 65/2, 65/18, Л-1, Л-2, которые при нормальном урожае в начале сентября месяца накапливают сахар в ягодах от 19—23%.

Данные 7 лет изучения показали, что в условиях Ленинанканского плато вполне возможно выращивание виноградной лозы с укрыванием на зиму.

Изучение существующих ранних сортов винограда в конкретных условиях Ленинанкана и отбор из них наилучших, а также выведение ранних сортов путем воспитания молодых сеянцев в конкретных условиях местности, даст возможность продвинуть культуру винограда на Ленинанканском плато.